

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԷՌԵՍՏԻ

**ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն
և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ազրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՐԱԶՅԱ ՍԵՐԳԵՅԻ ԾՊՆԵՑՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր
ՍԱՅԱԴ ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԻԼՈՆԱ ԶԱՎԵՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 14:00-ին՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Վ. Տերյան 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի հոկտեմբերի 29-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, դոցենտ



Վ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ժամանակակից փուլում կարևոր դեր են կատարում բնական մենաշնորհները, որոնք դիտարկվում են որպես պետական բյուջեյի ձևավորման և տնտեսության կայունացման էական գործոններ: Էներգետիկ համակարգի ցածր արդյունավետության, սեփական ածխաջրածնային (գազ, նավթ) ռեսուրսների բացակայության պայմաններում, հիմնախնդիրը դարձնում են առավել արդիական:

Հարկ է նշել, որ շուկայական տնտեսավարման պայմաններում, երբ ՀՀ-ում զգալիորեն կրճատվեցին արտադրության ծավալները, հատկապես արդյունաբերության և շինարարության ոլորտների, բնական մենաշնորհի արտադրանքի (մատուցվող ծառայությունների) նկատմամբ պահանջարկը, հետևաբար նաև արտադրության ծավալները, զգալիորեն կրճատվեցին: Դա նոր խնդիրներ առաջադրեց ոչ միայն բնական մենաշնորհի գործունեության ապահովման հարցում, այլ նաև ազգային տնտեսության համակարգում նրա կարգավորիչ գործառույթների ամրապնդման ու ընդլայնման գործում:

Հետազոտության խնդիրը բարդանում է նրանով, որ վերջին տարիներին Հայաստանում բավարար չափով ուշադրություն չի դարձվում բնական մենաշնորհի գործունեության կարգավորման խնդիրների լուծմանը, նույնիսկ իմանալով այդ ոլորտի մուլտիպլիկատիվ դերի մասին ազգային տնտեսության զարգացման գործում, պատշաճ մոտեցումներ չի ցուցաբերվում դրա համակողմանի ուսումնասիրությանը և առկա խնդիրների լուծմանը:

Նշված հիմնախնդրի պարզաբանման և գործնական կիրառման կառուցակարգերի մշակման անհրաժեշտությունը և կարևորությունը պայմանավորել են սույն աշխատանքի թեմայի ընտրությունը, ատենախոսության կառուցվածքը, առաջադրված խնդիրների ուսումնասիրման շրջանակներն ու խորությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է բնական մենաշնորհների ձեռնարկությունների պետական կարգավորման կառուցակարգերի կատարելագործմամբ Հայաստանի Հանրապետությունում պետության, սպառողի և բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի հավասարակշռության ապահովումը:

Սահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

➤ ուսումնասիրել մենաշնորհի և մենաշնորհային շուկայական կառուցվածքի տնտեսական բովանդակությունը, դրանց տեսակները և ձևավորման էվոլյուցիոն գործընթացը,

➤ բացահայտել բնական մենաշնորհի գործառույթությունների իրականացման կառուցակարգերն ու առնձնահատկությունները,

➤ վերլուծել համաշխարհային տնտեսությունում բնական մենաշնորհի տարածված ձևերը, դրանցից մատնանշել Հայաստանի համար կիրառելի տարբերակները,

➤ վերհանել և ներկայացնել բնական մենաշնորհի էվոյուցիոն զարգացումները, ապապետականացման և մասնավորեցման ասպեկտները աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում,

➤ հիմնավորել ոլորտի պետական կարգավորման անհրաժեշտությունը և սահմանել պետության մասնակցության չափերը բնական մենաշնորհի կարգավորման հարցում,

➤ ուսումնասիրել և վերլուծել բնական մենաշնորհի պետական կարգավորման մեթոդաբանական ասպեկտները և նախանշել դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման բնագավառում,

➤ ներկայացնել Հայաստանի բնական մենաշնորհի պետական կարգավորման ինստիտուցիոնալ վերափոխումները դրա կատարելագործման համատեքստում,

➤ բացահայտել Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհի պետական կարգավորման ոլորտում առկա հիմնահարցերը,

➤ մշակել բնական մենաշնորհները կարգավորող պետական մարմնի գործունեության, սակագների հաշվարկման մեթոդոլոգիայի և բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների կատարելագործման, ինչպես նաև ներդրումների ներգրավման խթանիչ գործիքակազմի բարելավման ուղղություններ և կառուցակարգեր:

Հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են ծառայել Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում ընդունված օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերը, հետազոտության խնդիրների հետ առնչվող հայրենական և օտարերկրյա գիտնականների գիտական աշխատանքները: Օգտագործվել են համաշխարհային տնտեսությունում կիրառվող շուկայական տնտեսության կարգավորման ժամանակակից ձևերն ու մեթոդները, որոնք վերաբերում են մրցակցային միջավայրի ձևավորմանը, տնտեսության ապամենաշնորհացմանը և բնական մենաշնորհների պետական կարգավորման հարցերին:

Հետազոտության համար տեղեկատվական բազա է հանդիսացել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀՀ ՀԾԿ), ՀՀ վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ), համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև բնական մենաշնորհների գործունեությանը վերաբերող հրատարակված պրակտիկ նյութերն ու տեղեկատվությունները: Հետազոտության ուսումնասիրությունները և գործնական առաջարկություններն իրականացվել են գիտապրակտիկ մեթոդների հիման վրա՝ համակարգված մոտեցումների, համալիր և համեմատական վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, գիտական վերացարկման, պոզիտիվային և նորմատիվային, ինչպես նաև մաթեմատիկական-վիճակագրական մեթոդների կիրառումով:

Ատենախոսության գիտական նորույթը և արդյունքները: Ատենախոսության գիտական արդյունքները հիմնված են Հայաստանի Հանրապետությունում

բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության և պետական կարգավորման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրության վրա, և դրսևորվում են որպես ազգային տնտեսության դինամիկ զարգացման, սակագների հաշվարկման մեթոդոլոգիաների ու ներդրումային քաղաքականության կարգավորման մեթոդական հիմքի մշակման բազա:

Ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքներից գիտական նորույթ, մեր գնահատմամբ, կարող են հանդիսանալ հետևյալները.

- մշակվել են պետության ու բնական մենաշնորհի սուբյեկտների փոխգործակցության նոր կանոններ և կառուցակարգեր,

- բացահայտվել են բնական մենաշնորհի պետական կառավարման և պետական կարգավորման հիմնախնդիրներն ու հիմնավորվել է, որ պետությունը նույնպես պետք է ունենա կարգավորման սուբյեկտի կարգավիճակ,

- մշակվել է բնական մենաշնորհը կարգավորող պետական անկախ մարմնի ֆինանսավորման և գործունեության վերահսկողության նոր կառուցակարգ,

- մշակվել է բնական մենաշնորհի կարգավորման խթանիչ գործիքակազմ, մասնավորապես՝ սակագների կարգավորման նոր մեթոդաբանություն, ինչն էականորեն կնպաստի բնական մենաշնորհի սուբյեկտի ներդրումների խթանմանն ու գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Հետազոտության արդյունքների գործնական ու կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունում ստացված տեսական և մեթոդական դրույթները, գիտական արդյունքները, եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել ՀՀ բնական մենաշնորհների գործունեության կատարելագործման, դրանց արդյունավետության բարձրացմանն ուղղված կառուցակարգերի, կարգավորման մեթոդների ընտրության, առկա խոչընդոտների սահմանափակումների վերացման, ոլորտի վերաբերյալ հստակ տեղեկատվությունների ստացման և այլ խնդիրների լուծման գործում: ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովը հետազոտությունների արդյունքները կարող է կիրառել բնական մենաշնորհների ծառայությունների սակագները հաշվարկելիս, որոշ դեպքերում ուղեցույց ընդունելով մեր կողմից առաջարկվող սկզբունքներն ու մեթոդները, իսկ պետությունը (գործադիր և օրենսդիր մարմինները) կարող է ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնել՝ ապահովելով կարգավորող հանձնաժողովի ինստիտուցիոնալ անկախությունը ի նպաստ վերջինիս միակ և հիմնական գործառնայի իրացմանը, այն է՝ բնական մենաշնորհի շուկաների բոլոր մասնակիցների շահերի հավասարակշռմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումը:

Հետազոտության հիմնական դրույթները, մեթոդական մշակումներն ու առաջարկությունները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային էկոնոմիկայի ու Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության գիտական արդյունքները հրատարակվել են ատենախոսի 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը բխում է գիտական հետազոտության առջև դրված նպատակից և խնդիրներից, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից: Այն շարադրված է 153 էջում՝ առանց հավելվածների, պարունակում է 7 աղյուսակ, 6 գծապատկեր և գրականության 99 աղբյուր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունն ու առաջադրված խնդիրների կարևորությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը՝ արված առաջարկություններով:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Բնական մենաշնորհը ազգային տնտեսության համակարգում (տեսամեթոդական հիմքեր)», վերլուծվել է ներկայացվել են «Մենաշնորհ» հասկացության տեսամեթոդական հիմքերը, հետազոտվել են մենաշնորհի ձևավորումը և տեսակները, բնական մենաշնորհի գործառնությունների կառուցակարգերը, համաշխարհային տնտեսությունում բնական մենաշնորհի ժամանակակից ձևերը, միջազգային փորձն այդ ոլորտում և ներկայացվել է ՀՀ բնական մենաշնորհների կարևորությունը տնտեսության զարգացման համար:

Տնտեսության զարգացման ժամանակակից փուլում կարևոր դեր ունեն բնական մենաշնորհները, որոնք դիտարկվում են որպես պետական բյուջեն կայուն ձևավորող, համակարգաստեղծ և պետության անվտանգությունն ու տնտեսության կայունացումն ապահովող էական գործոններ: Բնական մենաշնորհը շուկայի այն վիճակն է, երբ մեկ սուբյեկտի կողմից ամբողջ շուկայական պահանջարկը բավարարում է ավելի ցածր ծախսերով, քան երբ շուկայում գործեին մի քանի սուբյեկտներն՝ առաջարկելով նույն ապրանքը կամ ծառայությունը և այս պայմաններում մրցակցությունը կամ նպատակահարմար չէ կամ տեխնիկապես հնարավոր չէ:

Բնական մենաշնորհի առանձնահատկություններն են.

➤ տեխնոլոգիական գործընթացում բարդ ինժեներական ենթակառուցվածքների օգտագործումը,

➤ տեխնոլոգիական գործընթացների անընդհատությունը և հստակ հաջորդականությունը,

➤ բնական մենաշնորհի արտադրանքի հանդեպ ցածր առանձգականությունը՝ սպառողը երկար ժամանակ չի կարող հրաժարվել բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) սպառումից,

➤ արտադրանքի (ծառայության) թերարտադրության փոխհատուցման անհնարինություն այլ ժամանակի ավելցուկի հաշվին, քանի որ հնարավոր չէ կուտակել (պահեստավորել) այդ արտադրանքները,

➤ մրցակցությունը բերում է գործառույթների կրկնությանը, ինչը շատ մեծ ծախսատար է, քանզի բնական մենաշնորհի հանդիսացող ենթակառուցվածքները պատմականորեն գոյություն են ունեցել և արդեն իսկ տեխնիկապես ուղիղ կապակցված են սպառողին (էլեկտրալարեր, մալուխներ, խողովակներ),

➤ բնական մենաշնորհի բարձր կապիտալատարությունը, չվերադարձվող մեծ ծախսերը և այլն:

Նշված առանձանհատկություններով պայմանավորված, շուկայական տնտեսության արդի պայմաններում բնական մենաշնորհի տնտեսական բնույթը բացահայտվում է պետական-հանրային և մասնավոր-կորպորատիվ շահերի միախառնումով, որի հավասարակշռությունը կոչված է ապահովելու պետությունը: Բնական մենաշնորհը թույլատրելի մենաշնորհ է, ինչի նպատակային կիրառությունը արդարացված է այն պայմանով, որ պետությունը հանդիսանում է դրա անհրաժեշտ տարրը: Պետությունը չի պայքարում բնական մենաշնորհի դեմ, այլ սատարում է նրան՝ հանուն հանրային շահերի բավարարման գործառնությունների իրականացմանը: Բնական մենաշնորհը՝ որպես առանձնահատուկ տնտեսական կատեգորիա, իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք առաջին հերթին բաժանվում են արտադրական, համակարգ ձևավորող, ինտեգրատիվ (ամբողջացնող), կայունացնող և ազգային անվտանգություն ապահովող գործառույթների, մասնավորապես.

1. Արտադրական: Արտադրանքի թողարկումն է (ծառայության մատուցումը) մեծ տնտեսական արդյունքով, որը հանդիսանում է արտադրության համակենտրոնացման և մասնագիտացման, արտադրության կազմակերպման ցանցային բնույթի, ուղղահայաց ինտեգրման արդյունք: Հատկապես բարձր մակարդակի դրական տնտեսական արդյունքը հնարավորություն է տալիս մենաշնորհին ստանալ մրցակցային առավելություններ:

2. Համակարգ ձևավորող: Բնական մենաշնորհի ցանցերն իրականացնում են միասնական տնտեսական տարածքների ստեղծում և պահպանում, ինչը Հաստանի պարագայում արդիական է, քանի որ մեր հանրապետությունը միասնական գազամուղային, էլեկրահաղորդակցության ցանցային համակարգի մեջ է գտնվում Իրանի, Վրաստանի, վերջինիս տարածքով նաև Ռուսաստանի հետ:

Հայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհի համարվող տնտեսության ճյուղերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

3. Ինտեգրատիվ (ամբողջացնող): Այս դեպքում հնարավոր է դառնում ապահովել տնտեսական տարածության մեջ տնտեսական կառույցների ինտեգրացում և արտադրողական ուժերի օպտիմալ տեղաբաշխում:

4. Կայունացնող: Բնական մենաշնորհի սուբյեկտները ներկայացնում են մեծ քանակության շխատատեղեր, պետական բյուջեի եկամուտ ապահովող հարկատուներ, ավելի քիչ են ենթարկվում տնտեսական ճգնաժամերի բացասական ազդեցությանը, քանի որ արտադրում են առաջին անհրաժեշտության ապրանքներ (ծառայություններ), հետևաբար՝ մեղմացնում են տնտեսության անկման գործընթացը «մուլտիպլիկատորների էֆեկտի» միջոցով: Նշանակում է, որ բնական

մենաշնորհի ոլորտը դիտարկվում է ճգնաժամային անկումից հետո՝ որպես տնտեսական ակտիվության խթանիչ:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհի համարվող տնտեսության ճյուղերը¹

h/h	Տնտեսության ճյուղ	Գործունեության տեսակ
1.	Էներգետիկայի բնագավառ	
1.1	Էլեկտրաէներգետիկական համակարգ	Էլեկտրական էներգիայի արտադրություն
		Էլեկտրական էներգիայի հաղորդում
		Էլեկտրական էներգիայի բաշխում
1.2	Ջերմամատակարարման համակարգ	Ջերմային էներգիայի արտադրություն
		Ջերմային էներգիայի փոխադրում
		Ջերմային էներգիայի բաշխում
1.3	Գազամատակարարման համակարգ	Բնական գազի փոխադրում
		Բնական գազի բաշխում
2.	Ջրային ոլորտ	
2.1	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ	Ջրային համակարգերի օգտագործում
		Ջրամատակարարման ծառայության մատուցում
		Ջրահեռացման ծառայության մատուցում
3.	Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ	
3.1	Հեռահաղորդակցության ցանցային համակարգ	Հանրային էլեկտրոնային ցանցի շահագործում
		Ռադիոհաճախականության օգտագործում
4	Երկաթուղային ենթակառուցվածքի բնագավառ	
4.1		Երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործում

5. Ազգային անվտանգություն ապահովող: Բնական մենաշնորհի ճյուղերը և ոլորտները ապահովում են հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և ազգային եկամտի (ԱԵ) կայուն աճ, հետևաբար՝ պետության վերահսկո-

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

ղության կորուստը բնական մենաշնորհի գործունեության նկատմամբ կարող է պարունակել սպառնալիքներ ազգային անվտանգությանը:

Բնական մենաշնորհի պետական կառավարման և պետական կարգավորման գործառնությունների հիմնական խնդիրները լուծվում են պետական (խառը) սեփականության միջոցով: Պետությունը, որպես տնտեսական գործունեության սուբյեկտ, չի ձգտում մաքսիմալացնել իր շահույթն այն աստիճանի, որը բնորոշ է մասնավոր ձեռներեցությանը: Նման փաստը իր մեջ ընդգրկում է և դրական, և բացասական հատկանիշներ: Մի կողմից այն պետական սեփականության միջոցով սահմանում է վերահսկողություն ձեռնարկությունների ծախսերը, իսկ մյուս կողմից կարգավորում է եկամուտները և ծառայության (ապրանքի) սակագները:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ի տարբերություն ազգային տնտեսության մյուս ճյուղերի, բնական մենաշնորհի կապիտալի և գույքի օտարումով, պետությունն իրեն չի ազատում դրանց կառավարման ու կարգավորման հոգսերից, այլ հակառակը՝ ավելի է մեծացնում պետության դերը բնական մենաշնորհների գործունեության կարգավորման վերահսկման և ռազմավարական զարգացման գործում: Ավելին, ըստ ուսումնասիրության արդյունքների, պետության կողմից բնական մենաշնորհների կառավարման և կարգավորման գործառնությունները պետք է լինեն տարանջատված:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «ՀՀ բնական մենաշնորհի պետական կարգավորումը և միջազգային փորձի վերլուծությունը», իրականացվել է բնական մենաշնորհի էվոլյուցիոն զարգացումների, ապապետականացման և մասնավորեցման ասպեկտների, կարգավորման գործընթացում պետության մասնակցության անհրաժեշտության և բնական մենաշնորհի կարգավորման սահմանների վերլուծություն, ինչպես նաև բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնական մեթոդների գնահատում:

Զարգացած շուկայական տնտեսության երկներում մեծ փորձ է կուտակվել բնական մենաշնորհի կարգավորման ուղղությամբ: Դրանց փորձի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է շուկայական հարաբերությունների ուղին ընտրած նորանկախ երկրների, այդ թվում՝ նաև Հայաստանի համար:

Պետական կարգավորման տեսությունը և պրակտիկան տարբերակում են 3 տեսակի մենաշնորհային շուկաներ.

1. **գուտ մենաշնորհ՝** միակ վաճառող, որը գերիշխող դիրք է գրավում տվյալ շուկայում,
2. **օլիգոպոլ (խմբատիրական) շուկաներ**, երբ շուկայի գերակշիռ մասը զբաղեցնում են մի խումբ վաճառողներ,
3. **տեխնոլոգիական** (այդ թվում՝ պատմականորեն ձևավորված) բնական մենաշնորհ:

Նշված շուկաներից յուրաքանչյուրն իր զարգացման գործընթացում փոխում է մենաշնորհային վարքագիծը, որին պետությունն անմիջապես պետք է արձագանքի: Դա պահանջում է կարգավորող և վերահսկող մարմինների որոշակի համակարգի ստեղծում: Շատ երկրներում պետական իշխանական մարմինների

հետ միասին, որոնք պատասխանատվություն են կրում ամբողջ տնտեսության համար, ստեղծվում են հատուկ ինստիտուտներ, հանձինս պետական հանձնաժողովների, գործակալությունների, փորձարարական խորհուրդների և այլն:

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ բնական մենաշնորհի պետական կարգավորման հատուկ տեսակ է համարվում պետության մասնակցությունը դրանց տնտեսական գործունեությանը, երբ պետությունը միաժամանակ հանդես է գալիս և ռազմավարական սեփականատիրոջ, և ռազմավարական մենեջերի դերում:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ձևավորված մոտեցումները կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին փուլի բովանդակությունն այն է, որ բնական մենաշնորհի վերակառուցումը պետք է նպատակաուղղվի մրցակցության ուժեղացմանը, իսկ այնուհետև մրցակցությունը կկարգավորի շուկան: Սակայն, առաջին արդյունքներից պարզ դարձավ, որ մրցակցությունն ինքը կարիք ունի սատարման, իսկ կարգավորման գործառույթը չի սահմանափակվում միայն շուկայի ստեղծումով: Դա էլ հանդիսացավ բնական մենաշնորհի բարեփոխումների գործունեության կարգավորման երկրորդ փուլի էվոյուցիոն սկիզբը:

Այս փուլի հիմնական խնդիրը կայանում է կարգավորման նոր մոտեցումների ձևավորումը: Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնական խնդիրը կայանում է ապառողների ու բնական մենաշնորհի ձեռնարկությունների միջև հավասարակշռության ապահովումը:

Կարևորագույն խնդիրների արդյունավետ լուծման առումով պետության համար բարդ է կառուցողական կառուցակարգ ընտրելը, որովհետև, բացի կարգավորիչ գործառույթներ իրականացնելուց, պետք է նաև կառավարի իր իսկ սեփականությունը, բնական կամ պետական մենաշնորհային դիրք ունեցող, շուկայի մասնակից հանդիսացող պետական ձեռնարկությունները: Օրինակ՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, որպես միջուկային վառելիքով աշխատող կայան, Հայաստանում գործող օրենսդրության համաձայն՝ պետական մենաշնորհային դիրք ունեցող ընկերություն է, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, որպես Հայաստանում էլեկտրաէներգիայի միակ հաղորդող՝ բնական մենաշնորհ: Ուստի, պահանջվում է բնական մենաշնորհիների շուկայում տարանջատել պետության կառավարման և կարգավորման գործառույթները: Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ պետությունը հանրային ծառայությունների ոլորտի մասնակից է, և չի կարող ինքն իրեն կառավարել, և համապատասխան կարգավորումներ իրականացնել, ինչպես նաև այդ ոլորտում սահմանել մշտապես հավասարակշռված խաղի կանոններ: Պետք է հաշվի առնել, որ մեծ է գայթակղությունը յուրաքանչյուր քաղաքական իրադարձության, օրինակ՝ համապետական ընտրությունների ժամանակ, նվազեցնել սպառողին մատուցվող ծառայությունների սակագները, կամ տալ դրա վերաբերյալ որոշակի խոստումներ: Այսպես՝ հնարավոր է, որ պետությունն իր սեփական ընկերություններում կնվազեցնի որոշակի ծախսեր կամ շահութաբերության նորման՝ զսպելով սպառողներ-

րին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագների՝ այլ գործոններով պայմանավորված աճը կամ սպառողներին (ընտրողներին) գոհացնելու համար ժամանակավորապես կնվազեցնի գործող սակագները: Դա բնորոշ է աշխարհի գրեթե բոլոր երկրներին: Մյուս կողմից, սպառողների շահերը պաշտպանելու նպատակով, պետական կարգավորող մարմինը կարող է շուկայի մասնավոր կապիտալի հիման վրա գործող այլ մասնակիցների համար սահմանել այնպիսի կանոններ, որոնք նույնպես թույլ կտան որոշակի ժամանակավոր արդյունք ապահովել սպառողների համար, սակայն տնտեսական կամ իրավական առումով կապակայունացնեն շուկան: Օրինակ՝ սահմանել նվազագույն սակագներ, միաժամանակ իրավական ակտերով ամրագրել, որ դրա հետևանքով առաջացած վնասները մասնավոր և պետական ընկերություններին կփոխհատուցվեն հետագա տարիներին կամ կհաշվացվեն, ինչն ավելի վտանգավոր է: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ բնական մենաշնորհների շուկայի մասնակիցները, ըստ էության, կազմավորվում են երեք «խոշորացված» սուբյեկտների մասնակցությամբ՝

- պետություն՝ իր իսկ հիմնադրած ընկերություններով,
- մասնավոր կապիտալով հիմնադրված ընկերություններ,
- սպառողներ:

Հետևաբար, բնական մենաշնորհների շուկայի յուրաքանչյուր մասնակից, չի կարող լինել և՛ կառավարիչ, և՛ կարգավորող: Ուստի պետական կարգավորող անկախ մարմնի ստեղծումը բնական մենաշնորհների շուկայի կարգավորման ամենաարդյունավետ լուծումն է: Տվյալ մարմնի հիմնադիր պետք է լինեն շուկայի բոլոր մասնակիցները՝ պետությունը (Ազգային ժողով և Կառավարություն), շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունները և սպառողները, որոնց կողմից սահմանվում է կարգավորող մարմնի հիմնական գործառույթը՝ շուկայի մասնակիցների շահերի հավասարակշռումը: Համահիմնադիրները «պայմանավորվում են» նաև չմիջամտել պետական կարգավորող մարմնի գործունեությանը՝ պայմանով, որ այդ մարմինն օրենքով սահմանված իր միակ՝ համահիմնադիրների շահերի հավասարակշռման գործառույթը պարտավոր է բոլոր կողմերի համար իրականացնել որքան հնարավոր է թափանցիկ: Ուստի մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում ձևավորված հասարակական այն ընկալումը, որ պետական կարգավորող մարմինը պետք է միայն պաշտպանի սպառողների շահերը, հիմնավորված չէ:


Ընդ որում, բնական մենաշնորհի պետական կարգավորման ժամանակային սահմանների տեղաշարժը տեղի է ունենում ոչ միայն բնական մենաշնորհի որակական վիճակի փոփոխության պահերին, այլ նաև տնտեսության առավել բարդ ժամանակահատվածներում: Առկա են նաև պետական կարգավորման այլ սահմաններ, որոնք որոշվում են հարկային դրույքաչափերով և հիմնական կապիտալի ամորտիզացիոն հատկացումների նորմերով: Դրանք են բյուջետային, սոցիալական և ներդրումային սահմանները: Բյուջետային սահմանները բխում

են բյուջետային եկամուտներից հնարավոր հրաժարման սահմաններից դուրս: Օրինակ, դրանք որոշում են բնական մենաշնորհի շահութաբերության և հարկերի միջոցով բյուջե մուտք արվող սակագների ավելացման հաշվին ու դրա հետևանքների միջև ընտրությամբ: Սոցիալական սահմանները կապված են բնական մենաշնորհի հարմարվելու պատրաստակամությանը կարգավորման ներգործության որոշակի մակարդակի հետ, իսկ սպառողը՝ նրա արտադրանքի սակագնի հետ: Բնական մենաշնորհի արտադրության զարգացման և ինքնաֆինանսավորման ապահովման պետական կարգավորման կարևոր միջոցներից է նաև հիմնական կապիտալի դուրս գրման արագացված ամորտիզացիայի կիրառությունը: Արագացված ամորտիզացիան կիրառում են այն դեպքում, երբ գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ տեղի է ունենում հիմնական կապիտալի բարոյական մաշվածություն՝ բարձրացվում է ամորտիզացիոն նորմայի մակարդակը: Կարգավորող մարմնի առաջարկվող հիմնական գործառույթները ներկայացված են գծապատկեր 1-ում:

Բայց դա ունի վտանգավոր հետևանք, քանի որ բերում է թողարկվող արտադրանքի ինքնարժեքի բարձրացմանը, հետևաբար նաև ֆիրմայի շահույթի չափերի և շահութաբերության նվազեցմանը: Արագացված ամորտիզացիա կիրառվում է նաև տնտեսական ճգնաժամի և լճացման ժամանակ: Նվազում է արտադրական կարողությունների ծանրաբեռնվածությունը, կրճատվում արտադրանքի թողարկման ծավալները, աճում են ծախսերը և որպես հետևանք դժվարանում են մատակարարներին վճարումները, արտադրանքի պահպանումն ու իրացումը: Եվ նույնիսկ եթե ամորտիզացիոն հատկացումներն հաշվարկվի նախկին նորմաներով, դրանք բաշխվում են ավելի փոքր քանակի արտադրանքի վրա, այն նույնպես մեծացնում է արտադրանքի ինքնարժեքը: Այսինքն՝ այս դեպքում «մասշտաբի էֆեկտը» գործում է հակառակ ուղղությամբ:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ կիրառվող կարգավորման կառուցակարգները, որպես օրինակ՝ էներգետիկայի ոլորտի ընդհանուր առանձնահատկությունների, տվյալ երկրին բնորոշ սահմանափակումների (բնական ռեսուրսների առկայություն, դիվերսիֆիկացված լինելու հանգամանք և հնարավորություններ, փոքր երկրներում նաև մրցակցությամբ պայմանավորված սահմանափակումներ), զարգացվածության աստիճանի (երկրի ընդհանուր և ոլորտային ռիսկերի մակարդակ), բաժանվում են երկու հիմնական խմբի.

- ծախսերի որոշման կառուցակարգներ (cost based),
- շուկայական կառուցակարգեր (market based):



Գծապատկեր 1. Կարգավորող մարմնի հիմնական գործառույթները²:

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

Ներկայումս Հայաստանում էներգետիկայի ոլորտի կարգավորումն իրականացվում է ծախսերի որոշման կառուցակարգներով, ինչը ենթադրում է սպառողներին մատուցվող ծառայությունների արժեքի (cost of service), այն է՝ ոլորտում գործող ընկերությունների անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը կարգավորման յուրաքանչյուր ցիկլում ամբողջությամբ փոխհատուցելու նպատակով սակագների որոշում: Ծախսերի որոշման կառուցակարգները ներառում են կարգավորման տարբեր՝ շահույթի դրույքի սահմանային մակարդակի (rate of return regulation), սահմանային հասույթի մակարդակի (revenue cap regulation) և սահմանային սակագնի մակարդակի (price cap regulation) մեթոդներ: Հայաստանում, ըստ ընկերությունների գործունեության առանձնահատկությունների, կիրառվում են նշված բոլոր մեթոդները:

Բնական մենաշնորհի պետական կարգավորման սահմանների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հանգում ենք հետևյալին.

1. Պետական կարգավորման սահմանների ձևավորումը կատարվում է որոշակի գործոնների ազդեցության ներքո և եթե ռացիոնալ սահմանը կողմերի միջև փոխազդեցման կետն է, ինչն առաջանում է կարգավորման սուբյեկտի և օբյեկտների միջև, ապա հիմնական գործոնները, որոնք ազդում են նրա ձևավորման վրա տանում են բնական մենաշնորհների և դրանց արտադրանքի սպառողների շահերի համադրմանը: Օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների կառուցակարգերի միջոցով ռացիոնալ պետական կարգավորման շրջանակներում հստակեցվում են պետական կարգավորման ազդեցության սահմանները: Դրանց փոխգործողությունները հանդես են գալիս որպես տարբեր տնտեսական շահերի համաձայնեցման կառուցակարգ: Գործնականում այդ կառուցակարգի միջոցով իրականացվում է պետական կարգավորման համակարգի պարզեցում կամ բարդացում, ռենտային վճարումների բարձրացում կամ իջեցում, հարկային քանակական և որակական բնութագրերի մեծացում կամ փոքրացում, որոնցով հարկվում են բնական մենաշնորհները և դրանց արտադրանքի սպառողները, չնորմալավորված սպառման դիմաց: Այդ կառուցակարգի գործունեությունից կախված պետական կարգավորման սահմանները կարող են տեղաշարժվել ժամանակի ու տարածության մեջ: Բացի դրանից, բնական մենաշնորհների կարգավորման սահմանների վրա որոշակի չափով ներգործում են արտաքին շուկայական գործոնները, քանի որ դրանք են որոշում շուկայական սուբյեկտների պահանջումները և ինտենսիվությունը, այն է՝ տնտեսական շահերը:

2. Շուկայական տնտեսավարման պայմաններում թվարկած բնական մենաշնորհի պետական կարգավորման սահմանները կրում են հարաբերական բնութագիր: Այդ շրջանակներում պետական կարգավորումը շարունակում է զարգանալ և տարբեր իրավիճակներում ապացուցել իր արդյունավետությունը, մշտապես կատարելագործելով գործունեության կառուցակարգը: Ժամանակակից պայմաններում բնական մենաշնորհի պետական կարգավորման պրակտիկան ցույց է տալիս նրա բավարար արդյունավետությունը, որպեսզի թույլ չտա համընդհանուր ճգնաժամ և հասարակական աղետներ:

Բնական մենաշնորհի կարգավորման հիմնական մեթոդը գնային քաղաքականությունն է: Ծախսերի որոշման կառուցակարգների կիրառման ժամանակ սակագների կարգավորման, ինչպես նաև ներդրումների խթանման նոր մեթոդ է կարգավորման խթանիչ գործիքակազմը (incentive-based mechanisms), որի միջոցով արդյունավետության առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով միջինացվում է ընկերությունների ծախսերի մակարդակը և օպտիմալ ցուցանիշների հասնելու ակնկալիքով որոշակի պայմաններով ֆիքսվում կարգավորման ավելի երկար ցիկլի համար: Այդպիսի ցուցանիշներ կարող են լինել ընթացիկ ծախսերը, կանխատեսվող ներդրումները, կորուստները, հավաքագրումները և այլն: Իսկ ընկերությունների համար օպտիմալացում կատարելու խթանը կարգավորման ընտրված ցիկլի ընթացքում (ցանկալի է կարճ ժամանակահատվածում) լրացուցիչ եկամուտներ ստանալու հնարավորությունն է:

Որպես կարգավորման խթանիչ գործիքակազմի կիրառման օրինակ կարևոր ենք համարել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ծախսերի և կորուստների կրճատման ուղղությամբ ձեռնարկված համապատասխան միջոցառումների ներկայացումը: Հանձնաժողովի 2016թ. ապրիլի 29-ի № 98Ա որոշմամբ, սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայում կատարված համապատասխան փոփոխությունների համաձայն, սկսած 2016 թվականից, 5-ամյա ժամանակահատվածի համար բաշխիչ ցանցում, որպես հաստատուն մեծություն, էլեկտրաէներգիայի կորուստները սահմանվել են 11,03 %: Նշված մեծությունը հաշվարկվել է 2015թ. ապրիլի 1-ից մինչև 2016թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի կորուստների տվյալների հիման վրա. հիմք է ընդունվել սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկան: Նշված ժամանակահատվածում բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի փաստացի կորուստները կազմել են 11,03 %:

Հետագայում, հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող մեծածավալ ներդրումային ծրագրերը³, ծախսերի և կորուստների կրճատման խրախուսիչ կառուցակարգը որոշակիորեն կատարելագործվել է և հանձնաժողովի 2017թ. նոյեմբերի 15-ի № 490Ա որոշմամբ սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայով սահմանվել է, որ, սկսած 2016 թվականից, 5-ամյա ժամանակահատվածի համար սակագնի հաշվարկներում էլեկտրաէներգիայի կորուստները կմնան անփոփոխ՝ 2021թ. հաշվարկներում կազմելով 7,5 %-ից ոչ ավելի, և ևս 4 տարի մնալով անփոփոխ՝ 2025թ. հաշվարկներում կկազմեն 7 %-ից ոչ ավելի, ևս 3 տարի անփոփոխ մնալուց հետո 2028 թ. ու հետագա տարիների հաշվարկներում կկազմեն 6,4 %-ից ոչ ավելի:

Այսպիսով՝ կորուստների կրճատման նպատակով իրականացված խթանիչ քաղաքականության արդյունքում, սկսած 2016 թվականից, բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի փաստացի կորուստներն աստիճանաբար նվազել են. 2016թ. կազմել են 9,9 %, 2017-ին՝ 8,8%, 2018թ. 1-ին եռամսյակում՝ 8%: Առաջիկա տարի-

³https://df.am/news/2683/karen_harutyunyan_141.html

ներին ակնկալվող արդյունքը կարտացույցի 2021թ. վերանայվող սակագների հաշվարկներում, ինչը դրականորեն կանդրադառնա սպառողների գնողունակության վրա: Բացի այդ՝ ծախսերի և կորուստների կրճատման խրախուսիչ կառուցակարգի արդյունավետության նպատակով, ինչպես նաև սպառողների շահերը հաշվի առնելով, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում 2016-2027թթ. նախատեսվում է իրականացնել մեծածավալ ներդրումային ծրագիր, որը հնարավորություն կտա 2028թ. ունենալ գրեթե ամբողջությամբ արդիականացված, տեխնիկական ամենաբարձր չափանիշներին համապատասխանող էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցեր, կրճատել ընկերության շահագործման և պահպանման ծախսերն ու էլեկտրաէներգիայի կորուստները: Առնվազն 1660 աշխատողով կկրճատվի աշխատակազմը, կրկնակի անգամ՝ նորոգման և նյութական ծախսերը, մոտ 20%-ով՝ մյուս ծախսերը: Բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի կորուստները գործող սակագների հաշվարկներում նախատեսված 11,03 %-ից կնվազեն և 2028թ. սակագների հաշվարկում կկազմեն առավելագույնը 6,4 %:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի իրավակարգավորումներին համապատասխան, էլեկտրական էներգիայի բաշխողը («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն) հանդիսանում է էլեկտրական էներգիայի մեծածախ գնորդ, և հետևաբար այդ իրավակարգավորման ներքո, հաշվարկային տարվա ընթացքում, էլեկտրական էներգիայի արտադրանքի կամ սպառման ծավալների թե բացասական և թե դրական փոխդրությունների/ շեղումների ռիսկը կրում է բաշխողը: Այս խնդիրը պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր հաշվարկային տարի սակագները հաշվարկվում են այդ տարում արտադրվելիք էլեկտրական էներգիայի և սպառման ծավալների կանխատեսումների հիման վրա, և բնականաբար տարևերջում այդ կանխատեսումները չեն կարող չտարբերվել փաստացի ծավալներից: Որպես օրինակ, եթե կանխատեսվել է, որ որևէ արտադրող կայան, պետք է հաշվարկային տարում արտադրի “X” քանակի էլեկտրական էներգիա “Y” սակագնով, բայց վթարի պատճառով այդ կայանը արտադրել է “X”-“Z” քանակի էլեկտրական էներգիա, ապա բաշխողը, ներքին շուկայի պահանջարկը բավարարելու համար, ստիպված է պակասող “Z” քանակի չափով էլեկտրաէներգիա գնել մեկ այլ արտադրողից, որպես կանոն՝ նախատեսված “Y” սակագնից ավելի բարձր սակագնով (այդ էլեկտրական էներգիան որպես կանոն՝ թանկ է լինում, որովհետև այն գնվում է ռեզերվից, իսկ ռեզերվում, իրենց տեխնոլոգիական կառուցվածքով կարող են լինել միայն ջերմաէլեկտրակայանները): Եվ, նկատի ունենալով, որ վերը նկարագրված կարգավորման խթանիչ (**incentive-based mechanisms**) մեթոդի հիմնարար սկզբունքներից մեկը բաշխողի բնականոն գործունեության համար անհրաժեշտ հասույթի ապահովումն է, Հանձնաժողովի 2016 թ. ապրիլի 29-ի № 98Ա, իսկ հետո 2019 թվականի մայիսի 29-ի № 158 Ա որոշմամբ, սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայում ամրագրվել է նաև փաստացի և հաշվարկային մարժաների տարբերության արդյունքում

ձևավորված փոխհատուցման ենթակա գումարի (**ՓԳ**) որոշման հետևյալ բանաձևը.⁴

$$\Phi_{\text{Գ}} = \sum_{t=1}^m (U_t^{\zeta} - U_t^{\phi}) * \left(1 + \frac{S}{100}\right),$$

որտեղ՝

m-ը Հանձնաժողովի նիստին Բաշխման ծառայության սակագների վերանայման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող այն ժամանակահատվածի ամիսներն են (բացառությամբ նշված նախագծի ներկայացման ամսվան նախորդող ամսվա), որոնց համար սույն կետի համաձայն չի հաշվարկվել և Բաշխման ծառայության սակագներում չի ներառվել փոխհատուցման ենթակա գումար (**ՓԳ**),

U<t-ն՝ t-րդ ամսում բաշխողի հաշվարկային անհրաժեշտ հասույթի և գնվող էլեկտրական էներգիայի արժեքի տարբերությունն է (դրամ),

UU_t^{ϕ}-ն՝ t-րդ ամսում բաշխողի փաստացի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերությունն է (դրամ),

S-ն փոխհատուցման ենթակա գումարի վրա կիրառվող տոկոսադրույքն է, որն ընդունվում է հավասար 12 տոկոս:

UU_t^{ζ} մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով⁵

$$U_t^{\zeta} = \sum_{i=1}^n (P_{ti}^{\zeta} * U_{P_{ti}}) - G_{t} U_t^{\zeta}$$

որտեղ՝ **n**-ը սպառողական խմբերն են, որոնց համար սահմանված են Բաշխման ծառայության սակագներ,

PP_{ti}^{ζ}-ն՝ t-րդ ամսում i-րդ սպառողական խմբի համար բաշխված էլեկտրական էներգիայի (առանց Լիցենզավորված անձի սեփական և տնտեսական կարիքների) հաշվարկային քանակն է (կՎտժ),

U$U_{P_{ti}}$-ն՝ t-րդ ամսում i-րդ սպառողական խմբի համար Բաշխման ծառայության սակագինն է (դրամ/կՎտժ):

GG_t UU_t^{ζ}-ն՝ t-րդ ամսում գնվող էլեկտրական էներգիայի հաշվարկային արժեքն է (դրամ):

UU_t^{ϕ} մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով⁶

⁴ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թ. ապրիլի 29-ի № 98Ա և 2019 թվականի մայիսի 29-ի № 158 Ա որոշումներ:

⁵ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թ. ապրիլի 29-ի № 98Ա և 2019 թվականի մայիսի 29-ի № 158 Ա որոշումներ:

⁶ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թ. ապրիլի 29-ի № 98Ա և 2019 թվականի մայիսի 29-ի № 158 Ա որոշումներ::

$$U_t^\Phi = \sum_{i=1}^n (F_{ti}^\Phi * U_{F_{ti}}) - \frac{(F_{t_t}^\Phi + U_{U_{t_t}^\Phi}) * U_{F_{t_t}^\Phi}}{1 - U_{F_{t_t}^\Phi}} * U_{F_{t_t}^\Phi}$$

որտեղ՝

ԲԷՓԹ-ն՝ t-րդ ամսում i-րդ սպառողական խմբի համար բաշխված էլեկտրական էներգիայի (առանց Լիցենզավորված անձի սեփական և տնտեսական կարիքների) փաստացի քանակն է (կՎտժ),

ԲԷՓ-ն՝ t-րդ ամսում բոլոր սպառողական խմբերի համար բաշխված էլեկտրական էներգիայի (առանց Լիցենզավորված անձի սեփական և տնտեսական կարիքների) փաստացի քանակն է (կՎտժ),

ՍԿՀ-ն՝ t-րդ ամսում Լիցենզավորված անձի կողմից սեփական և տնտեսական կարիքների համար օգտագործվող էլեկտրական էներգիայի հաշվարկային քանակն է (կՎտժ),

ԿԲՀ-ն՝ Բաշխման ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի նկատմամբ Բաշխման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի թույլատրելի կորուստի հաշվարկային տոկոսային մեծությունն է (%),

ՍԷ-ն՝ t-րդ ամսում Բաշխման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի թույլատրելի կորուստի և սեփական ու տնտեսական կարիքների համար Լիցենզավորված անձի կողմից էլեկտրական էներգիայի գնման սակագինն է (դրամ/կՎտժ), որն ընդունվում է էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձի կողմից սպառողների պահանջարկի բավարարման համար գնվող էլեկտրական էներգիայի (իզոլոյթյան) հաշվարկային միջին կշռությանին գնին (ներառյալ ծառայությունների արժեքը) հավասար, եթե Առևտրային կանոններով այլ բան սահմանված չէ:

Կարևոր ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ բնական մենաշնորհի պետական կարգավորման համակարգի կայացման և կատարելագործման հարցում կարևորվում են պետական կարգավորման ռազմավարության, սկզբունքների ու մեթոդների հստակեցումը:

Ուսումնասիրության արդյունքների համատեքստում սահմանվել են բնական մենաշնորհի գործունեության կառուցակարգի արդիականացման սկզբունքները: Ըստ որի՝ ատենախոսությունում հիմնավորվել է, որ բնական մենաշնորհների ձևափոխման հիմնական մոդել պետք է հանդիսանա վերակառուցումը՝ ուղղահայաց-ինտեգրված ընկերությունների տրոհումը ըստ բիզնեսի տեսակների:

Ատենախոսության երրորդ՝ «Բնական մենաշնորհի պետական կարգավորման կատարելագործման հիմնական ուղղությունները ՀՀ-ում» գլխում. կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա մշակվել են Հայաստանի բնական մենաշնորհի կատարելագործման համատեքստում ինստիտուցիոնալ վերափոխումները, բնական մենաշնորհի սակագնային քաղաքականության կարգավորման կատարելագործման և ՀՀ բնական մենաշնորհների սակագների կիրառման գործընթացի բարելավման ուղղությունները և հայեցակարգային հիմնախնդիրները: Նոր տնտեսական համակարգին անցնելու

գործընթացում ՀՀ-ում անհրաժեշտություն առաջացավ իրականացնել ինստիտուցիոնալ վերափոխումներ, որպեսզի տնտեսվարող սուբյեկտները ձեռք բերեն տնտեսական ազատություն, ինքնուրույնություն և հնարավորություն ունենան բարձրացնելու տնտեսության մրցունակությունը: Ինստիտուցիոնալ վերափոխումները պետք է իրականացվեն հաշվի առնելով երկրի տնտեսական զարգացման շահերը, համապատասխանեն ազգային առանձնահատկություններին և նպաստեն սահուն կերպով անցնելու մեկ համակարգից մյուսին, կամ էլ հին բազայի վրա ստեղծել նորը:

Տարիներ	2016	2017-2020	2021-2024	2025-2027	2028	
Մաշված. (4%) և շահույթի (12%) առավելագույն սահման	-	82 մլն \$	82 մլն \$	82 մլն \$	82 մլն \$	
Ներդրումներ (մլրդ. դրամ)	0	147	118	85	-	350
Աշխատողների թվաքանակ	7806	7806	6706	6426	6146	-20 %
Շահագործման և պահպանման ծախսեր (մլն դրամ)	7818	7818	6748	5758	5056	-35 %
Կորուստ (%)	11.03	11.03	7.5	7.0	6.4	-40 %

Գծապատկեր 2. Կարգավորման խթանիչ գործիքակազմի կիրառման գրաֆիկական պատկերը:⁷

⁷ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, օգտվելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թ. ապրիլի 29-ի № 98Ա և 2019 թվականի մայիսի 29-ի №158Ա որոշումներով սահմանված թվային տվյալներից:

Նոր ինստիտուտների ներդրումը կարող է խզել կապերը նախկինում գործող ինստիտուտների միջև, ընդ որում ինչքան շատ լինեն ոչ ֆորմալ կարգավիճակ ունեցող կառույցներ, այնքան արդյունավետ կլինի նոր ինստիտուտների ներդրման գործընթացը: Այդ գործընթացն ունի և դրական և բացասական կողմեր: Տնտեսության մեջ, սկզբնական փուլում առաջանում են առավել բարդ հարաբերություններ, որոնք բերում են գործառնական ծախսերի կարճաժամկետ բարձրացմանը, ինչը հանդիսանում է հին և նոր նորմերի հակադրության արդյունք: Այդ պատճառով անհրաժեշտ է ճիգեր գործադրել, որպեսզի և հասարակությունը և պետական ապարատը յուրացնեն նոր կանոններն ու նորմերը:

Կարգավորման խթանիչ գործիքակազմի կիրառման ծավալները ներկայացված են գծապատկեր 2-ում:

«Հ-ում ինստիտուտների հիմնական մասը ներդրվել են ելնելով հատկապես զարգացած երկրների փորձից, որը ներկայումս համարվում է առավել արդյունավետ, քանզի բացի վերը նշված առավելություններից հնարավորություն է տալիս նվազեցնել ներդրման սոցիալական ծախսերը և ստանալ խորհրդատվություններ ներդրման գործընթացում առաջացող հարցերի վերաբերյալ: Պետք է նկատի ունենալ, որ ինստիտուցիոնալ վերափոխումները չեն կարող տալ ակնթարթային արդյունքներ: Բնական մենաշնորհների անարդյունավետ կարգավորումը, մի կողմից կարելի է բացատրել շուկայական հարաբերությունների պայմաններում գործելու անկարողությունից, այսինքն ինստիտուցիոնալ վերափոխումների իրականացման մշակույթի չիմացությունից, շուկայական հարաբերությունների համապատասխան պահանջներից և ազգային շահերի գերադասման պատասխանատվության ցածր մակարդակից: Մյուս կողմից, պետական քաղաքականությունը կրել է ոչ արդյունավետ և համարժեք բնույթ, քանի որ պետական ուղղակի միջամտությունը կրում էր հաճախ ֆինանսական բնույթ, և հետագայում, ինչպես ցույց տվեց պրակտիկան, ընտրված ուղին նպաստում էր միայն ֆինանսական խնդիրների լուծմանը, այն էլ միայն ժամանակավոր: Թեև հանրային ծառայության ոլորտի բոլոր ճյուղերը համարվում են բնակչության կենսագործունեության ապահովման կարևորագույն բնագավառ, այդուհանդերձ, «Հ բնական մենաշնորհի ճյուղերից ներկայումս առավել զարգացած և համեմատաբար բարձր արդյունավետությամբ է գործում էլեկտրաէներգետիկան: «Հ-ում առկա է էլեկտրաէներգետիկայի շուկայի հետևյալ կառուցվածքը՝ միակ գնորդ-վաճառող, ինչը չի համարվում առավել արդյունավետ մոդել, առաջին հերթին առանձին տնտեսվարող սուբյեկտի համար մենաշնորհ դիրքի ստեղծման պատճառով: Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ այդ ոլորտի հիմնական առանցքը հանդիսացող էներգետիկայի ճյուղը ներկայումս կարիք ունի որոշակի վերափոխումների: Բավական է նշել, որ «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը գործում է 2001 թվականից, իսկ էլեկտրաէներգետիկայի շուկայի կիրառվող մոդելը ուժի մեջ է մտել 2004թ., ինչի հիմքում ընկած է միակ գնորդ-վաճառող, աշխարհում գրեթե իր ուժը կորցրած էլեկտրաէներգիայի շուկայի մոդելը: ՀՀ-ում

Էլեկտրաէներգետիկայի շուկայի ազատականացումը պահանջված է և պայմանավորված է առաջին հերթին տեղական շուկայի պահանջների բավարարման անհրաժեշտությունից, իսկ Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուրը կնպաստի ներքին շուկայի կայունացմանը՝ կիրառելով «վաճառել ավելցուկը, գնել դեֆիցիտը» սկզբունքը: Այս հանգամանքն էլ պահանջում է անցում կատարել Էլեկտրաէներգիայի շուկայի նոր մոդելին, որն էլ կնպաստի մեծածախ և մանրածախ շուկաների արդյունավետության բարձրացմանը: Այսպիսով, վերոնշյալ կառուցակարգերի գործադրման արդյունքում կմեծանա պետական եկամուտների պոտենցիալ չափերը գանձվող տուրքերի, հարկերի և միջպետական խողովակներով մուտքերի ավելացման շնորհիվ:

Բնական մենաշնորհի պետական կարգավորման կառուցակարգի ժամանակակից հասկացությունը, որպես գործիքների և մեթոդների ներգործության համալիր, ենթադրում է որոշակի չափանիշներով համակարգված մոտեցում, ինչպիսիք են՝ աշխատանքի սկզբունքները և ներգործության օբյեկտը (արտադրանքի գինը, ձեռնարկության ծախսերը, շահույթը): Բնական մենաշնորհի պետական կարգավորման մեթոդները բաժանվում են սակագնային և ոչ սակագնային ձևերի: Սակագնային մեթոդները քնորոշում են անմիջականորեն պետության նորմատիվների միջոցով ներգործություն բնական մենաշնորհների սակագների վրա՝ նպատակ հետապնդելով սահմանել պետության համար ցանկալի և բնական մենաշնորհի համար ընդունելի սակագին: Ոչ սակագնային մեթոդները ենթադրում են պետության ցանկացած նպատակաուղղված ներգործություն բնական մենաշնորհի արտադրանքի վրա չնորմայավորվող սակագների կիրառման ճանապարհով, թեև այն կարող է լինել անուղղակի մեթոդ: Սակայն, ներկա պահին գոյություն չունեն ոչ սակագնային կարգավորման մեթոդներ, որոնք կկարողանան կայուն կերպով վերահսկել «պետական կարգավորում-բնական մենաշնորհ» համալիրը՝ դրանց ռացիոնալ շրջանակներում, ինչի պատճառով էլ պետությունը ստիպված է կիրառել անմիջական վերահսկողություն և սակագների սահմանման լծակներ:

Բնական մենաշնորհների պետական կարգավորման վերոնշյալ մեթոդների կիրառումից բացի, չափազանց կարևոր ենք համարում որ սակագների պետական կարգավորումը իրականացվի հետևյալ չափանիշներին համապատասխան՝

- սակագների հաշվարկման և հաստատման ժամանակ պլանավորվող ինքնարժեքի ու շահույթի տնտեսական հիմնավորում,
- բնական մենաշնորհների կազմակերպությունների արտադրության, գիտատեխնիկական առաջադիմության և սոցիալական զարգացման համար ֆինանսական միջոցներով ապահովվածության համապատասխան մակարդակի առկայություն:

Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է մշակել բնական մենաշնորհների բոլոր շուկաների համար կարգավորման միասնական մեթոդաբանություն՝ հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ բնական մենաշնորհի սակագնային քաղաքականության համատեքստում, մեր կողմից առաջարկվում են կարևորել հետևյալ մոտեցումները՝

- բնական մենաշնորհի սակագնային հասույթը պետք է ընդգրկի նաև ներդրումային բաղադրիչը, հակառակ դեպքում ներդրումների համար անհրաժեշտ կլինի լրացուցիչ միջոցների հայթայթում,

- սակագները սահմանվում են հետադարձ ծախսերի վերլուծության և կանխատեսվող պլանների հիման վրա,

- մեթոդաբանության հիմքում պետք է դրվի մենաշնորհի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը խթանող միջոցառումների կիրառման կառուցակարգը, որի դեպքում կարգավորող մարմինների հետ համաձայնեցված արդյունքը առաջիկա երեք տարիների համար չի ընդգրկվում պլանային սակագնային հասույթի մեջ, այն ամբողջությամբ մնում է բնական մենաշնորհի ձեռնարկության տրամադրության տակ,

- մեթոդաբանությունը պետք է նախատեսի միջնաժամկետ (4-5 տարի) սակագների սահմանման հնարավորություն:

Այն բնական մենաշնորհների համար, որոնք ներկայացված են բարձր ինտեգրված ուղղահայաց կառուցվածքով, պետական կարգավորման ընթացքում պետք է սահմանվի արտադրանքի գների թույլատրելի չափեր («միջանցք»), որում հաշվի առնվի ինչպես ճյուղի զարգացման շահերը, այնպես էլ նպատակադրված մակրոտնտեսական ցուցանիշների նվաճումը: Պետության կողմից կարգավորվող արտադրանքի գների ներքին սահմանը որոշվում է ելնելով արտադրական ծախսերի փոխհատուցման և սահմանված շահույթի նորմայի ապահովման անհրաժեշտությունից, ինչը պետք է ընդգրկի ճյուղի զարգացման անհրաժեշտ մակարդակի ապահովումը: Բնական մենաշնորհի արտադրանքի գնի պետական կարգավորման վերին սահմանը նպատակ է հետապնդում մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշների ապահովում, ինչպիսիք են՝ բնական մենաշնորհ ճյուղի արտադրանքի անհրաժեշտ ծավալը և գնաճի տեմպերի զսպումը: Այդ ցուցանիշները կարող են նաև ազդեցություն թողնել կարգավորման ներքին սահմանների վրա, իսկ դա իր հերթին՝ ճյուղում ինովացիայի խթանմանը:

Սակագների ձևավորման հարցում մրցակցային հատվածի առավելությունների օգտագործումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա է ցանցային կառուցվածքի ծառայությունների նկատմամբ հավասար թույլտվություն բոլոր արտադրողների և սպառողների համար:

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ նշված հավասարության ապահովումը հնարավորություն կտա Հայաստանում զարգացնելու էլեկտրաէներգետիկայի ճյուղը և հիմքեր ստեղծել էլեկտրաէներգետիկայի արտադրությունն ու բաշխումն աստիճանաբար տեղափոխել տնտեսության մրցակցային հատված: Ցանցային կառուցվածքի ծառայությունների սակագների պետական կարգավորման սահմանների հստակեցման ժամանակ պետք է հաշվի առնվի ամբողջ ճյուղի ծախսերը և զարգացման նպատակները, ցանցային կառուցված-

քի շահերը, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների ապահովման պահանջները: Այդ երեք գործոնները միասին ձևավորում են ցանցային կառուցվածքի ծառայությունների գնի (սակագնի) դիապազոնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների շրջանակներում կատարվել է բնական մենաշնորհների պետական կարգավորման մեթոդաբանության համակողմանի վերլուծություն, որի արդյունքում բացահայտվել են ՀՀ բնական մենաշնորհի սակագնային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը և նախանշվել են ՀՀ բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնական ուղղությունները, որոնք հնարավորություն են տվել ատենախոսության թեմայի շրջանակներում կատարելու որոշակի եզրակացություններ:

1. Կատարված վերլուծությունների արդյունքում, գտնում ենք, որ պետական կարգավորող անկախ մարմնի ստեղծումն, ըստ էության բնական մենաշնորհների շուկայի կարգավորման ամենահեռանկարային և օպտիմալ լուծումն է: Տվյալ մարմնի հիմնադիր պետք է լինեն շուկայի բոլոր մասնակիցները՝ պետությունը (Ազգային ժողով և Կառավարություն), բնական մենաշնորհի սուբյեկտները և սպառողները, որոնց կողմից սահմանվում է կարգավորող մարմնի հիմնական գործառույթը՝ շուկայի մասնակիցների շահերի հավասարակշռումը: Համահիմնադիրները «պայմանավորվում են» նաև չմիջամտել պետական կարգավորող մարմնի գործունեությանը՝ պայմանով, որ այդ մարմինն օրենքով սահմանված իր միակ՝ համահիմնադիրների շահերի հավասարակշռման գործառույթը պարտավոր է բոլոր կողմերի համար իրականացնել որքան հնարավոր է թափանցիկ: Ուստի, մինչև օրս Հայաստանի Հանրապետությունում ձևավորված հասարակական այն ընկալումը, որ պետական կարգավորող մարմինը պետք է միայն պաշտպանի սպառողների շահերը, հիմնավորված չէ:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, ըստ որի հիմնավորել ենք, որ Պետական կարգավորող անկախ մարմնի միակ և հիմնական գործառույթն է հավասարակշռել բնական մենաշնորհի մասնակիցների շահերը կարգավորման գործիքակազմի միջոցներով (սակագների սահմանում, լիցենզավորում, կարգերի և կանոնների սահմանում), ապա կարող ենք եզրակացնել, որ կարգավորման սուբյեկտներ են հանդիսասանում շուկայի բոլոր մասնակիցները՝ անկախ իրենց իրավական կարգավիճակից կամ պատկանելիությունից: Այսինքն, թե պետությունը իր սեփականությունը հանդիսացող բնական մենաշնորհի սուբյեկտներով («ՀԱԷԿ» ՓԲԸ (ատոմակայան), «Բարձրավոլտ էլեկտրաջանցեր» ՓԲԸ և այլն), թե բնական մենաշնորհի հանդիսացող մասնավոր տնտեսվարող սուբյեկտները, և թե սպառողները, լինելով պետական կարգավորող մարմնի «համահիմնադիր», միաժամանակ հանդիսանում են կարգավորվող անձ:

3. Պետական կարգավորող անկախ մարմնի գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված են որոշակի վերահսկողական կառուցակարգեր, սակայն դրանք հիմնականում վերաբերում են վերջինիս ՀՀ պետական բյուջեից յուրաքանչյուր տարի տրամադրվող ֆինանսական միջոցների վերահսկմանը (ՀՀ կառավարության լիազոր մարմնի՝ ֆինանսների նախարարության կողմից) և կարգավորողի տարեկան ծրագրի կատարմանը՝ ՀՀ Ազգային ժողովի ֆինանսատնտեսական հանձնաժողովի կողմից, որտեղ յուրաքանչյուր տարի քննակվում է կարգավորող մարմնի հաշվետվությունը: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ պարզ է դառնում, որ խախտված են, անկախ կարգավորող մարմնի համահիմնադիրների իրավասությունները՝ վերահսկողության գործառույթի մասով: Մասնավորապես տվյալ կառուցակարգի կիրառման դեպքում, վերահսկողություն է իրականացնում միայն համահիմնադիրներից մեկը՝ Պետությունը, իսկ մնացած երկու համահիմնադիրները կամ այդ գործընթացին մասնակցում են միջնորդավորված (սպառողները՝ իրենց կողմից ընտրված Ազգային ժողովի միջոցով, որը ի դեպ ևս համահիմնադիր Պետության շահերի ներկայացուցիչներից մեկն է), կամ ընդհանրապես չեն մասնակցում (բնական մենաշնորհի սուբյեկտները):

4. Հաշվի առնելով վերոնշյալ դրույթները՝ առաջարկում ենք պետական կարգավորող անկախ մարմնի գործունեության նկատմամբ սահմանել վերահսկողության այնպիսի կառուցակարգ, որը կապահովի համահիմնադիրների հավասար մասնակցությունը այդ գործընթացին: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ սահմանել պարբերական (օրինակ՝ 3-5 տարի) անկախ աուդիտի անցկացման գործիքակազմը, իսկ աուդիտի ընտրությունը իրականացնել մրցույթային կազմով՝ մրցույթային հանձնաժողովում ներառելով բոլոր համահիմնադիրների ներկայացուցիչներին: Անկախ աուդիտի եզրակացությունը պետք է մատնանշի երեք ուղղություն.

- նշված ժամանակահատվածի ընթացքում պետական կարգավորող մարմնի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծախսման համապատասխանությունը օրենսդրության պահանջներին,

- բնական մենաշնորհի հանդիսացող կարգավորվող սուբյեկտների համար գործունեություն իրականացնելու հավասար պայմանների սահմանում և դրանց համահավասար վերահսկողություն՝ պետական կարգավորող մարմնի կողմից,

- սակագների և վճարների հաշվարկման և սահմանման մեթոդաբանության առկայություն, այդ մեթոդաբանությունում կիրառված գիտական մոտեցումների համապատասխանություն կարգավորող մարմնի կամ պետության կողմից իրականացվող քաղաքականությանն ու տեխնիկական ստանդարտներին, ինչպես նաև սահմանված սակագների համապատասխանությունը այդ մեթոդաբանությանը:

5. Պետական կարգավորող անկախ մարմնի նկատմամբ համահիմնադիրներից որևէ մեկի կողմից «ճնշման» գործադրման յուրաքանչյուր հնարավորու-

թյուն անհրաժեշտ է բացառել, քանզի այդ հնարավորության գործադրումը կխախտի կարգավորողի տնտեսական շահերի հավասարակշռման պահպանման սկզբունքը: Ինչպես նշել ենք, ներկայումս գործող վերահսկման կառուցակարգը թերի է, և հնարավորություն է ստեղծում համահիմնադիրներից մեկի, տվյալ դեպքում՝ պետության կողմից «ճնշումների» կիրառմանը: Ատենախոսության շրջանակներում, առանձին հատվածներում համակողմանի վերլուծության արդյունքում փաստարկված ներկայացրել ենք, որ կարգավորող մարմնի միակ և հիմնական գործառույթը՝ շահերի հավասարակշռումն է, և այդ գործընթացում պետք է բացառվի համահիմնադիրներից որևէ մեկի շահի գերակշռումը, եթե նույնիսկ այն վերաբերում սոցիալական խնդիրներին: Այս պարագայում մեծ է համահիմնադիրներից մեկի՝ Պետության գերակշռումը: Նման հնարավորություն ունեն նաև սպառողները: Խոսքը իհարկե սպառողներին մատուցվող ծառայությունների սակագների սահմանման վերաբերյալ է: Ինչպես ատենախոսության շրջանակներում հիմնավորել ենք այն հանգամանքը, ըստ որի բնական մենաշնորհի համարվող ցանկացած ծառայության սակագին անհրաժեշտ է սահմանել միայն կարգավորողի կողմից սահմանած, համապատասխան սակագնի հաշվարկման մեթոդիկայի հիման վրա: Նշված մոտեցումը թույլ է տալիս բազմակողմանի ուսումնասիրել բնական մենաշնորհի սուբյեկտի գործունեության համար անհրաժեշտ յուրաքանչյուր ծախս, ապահովել այդ սուբյեկտի բնականոն գործունեությունը, սահմանել շահութաբերության հստակ նորմաներ և անհրաժեշտ ու իրականացված ներդրումների վերադարձը, և, իհարկե բացառել բնական մենաշնորհի սուբյեկտներից որևէ մեկի նկատմամբ խտրական մոտեցումը:

6. Վերոնշյալ դրույթների համատեքստում, կարևոր ենք համարում կարգավորողի ֆինանսավորման այնպիսի կառուցակարգի մշակումը, որը կբացառի վերը նկարագրված խնդիրները: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ՀՀ օրենսդրությամբ ամրագրված կարգավորման վճարների կառուցակարգին, որի արդյունքում կարգավորողի տարեկան ծախսերի բյուջեն հաշվարկվում է օրենքով սահմանված հատուկ բանաձևով և ձևավորվում է կարգավորվող անձանց կողմից կարգավորման տարեկան վճարների միջոցով: Սակայն, այդ վճարները գանձվում են պետական բյուջե, որպես հարկատեսակ հարկային մարմնի կողմից, և հետո տրամադրվում են կարգավորող պետական մարմնին: Առաջարկում ենք, կարգավորողի բյուջեյի հաշվարկման կառուցակարգը թողել անփոփոխ, իսկ կարգավորման տարեկան վճարները գանձել ուղիղ կարգավորողի հաշվեհամարին: Վերացնել պետության վերահսկողական գործառույթները կարգավորողի ֆինանսական միջոցների նկատմամբ, իսկ այդ միջոցների ծախսման համապատասխանության ստուգումը իրականացնել պարբերական աուդիտի անցկացման միջոցով՝ ինչը մեր կողմից առաջարկվել էր նախորդ դրույթներում:

7. Կատարված ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ թեև բազմաթիվ են կարգավորողի կողմից կիրառվող սակագնային կարգավորման մեթոդները, սակայն դրանց մեծ մասի ուղվածությունը և նպատակը միայն արտադրության կամ ծառայության սակագնի արդարացի սահմանման ուղղվածություն

ունեն: Գրեթե, նույնպիսի ուղվածություն ունեն նաև պետության գործառույթները՝ տեխնիկական նորմատիվային ակտերի մշակման և դրանք կիրառության մեջ դնելու միջոցով: Այդ բոլոր գործիքների հիմնական նպատակն է նաև բնական մենաշնորհի սուբյեկտի, և իհարկե դրա արդյունքում պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների բնականոն, հուսալի և անվտանգ շահագործումը: Սակայն ինչպես նկատեցինք, այս ամբողջ կոնտեքստում չի կատարվում այդ ենթակառուցվածքների զարգացման, մասնավորապես ներդրումների իրականացմանն ուղղված խթանիչ կառուցակարգը: Ավելին, կիրառվող գործիքակազմի արդյունքում, նույնիսկ ենթակառուցվածքների բնականոն, հուսալի և անվտանգ շահագործման համար անհրաժեշտ ներդրումների իրականացումը մշտապես խնդիրներ է ստեղծում՝ ծառայության սակագնի վրա լրացուցիչ բեռ ստեղծելով, քանզի ինչպես նշել ենք, ներդրումների վերարժի այլ կառուցակարգ, քան դրանց ներառումը սակագնում մաշվածության և շահույթի որոշակի չափով չկա: Հետևաբար, նշված խնդրի լուծման համատեքստում ծախսերի որոշման կառուցակարգների կիրառման ժամանակ սակագների կարգավորման համար, որպես ներդրումների խթանման նոր մեթոդ՝ առաջարկում ենք կիրառել կարգավորման խթանիչ գործիքակազմը (incentive-based mechanisms), որի միջոցով արդյունավետության առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով միջինացվում է ընկերությունների ծախսերի մակարդակը և օպտիմալ ցուցանիշների հասնելու ակնկալիքով որոշակի պայմաններով ֆիքսվում է կարգավորման ավելի երկար ցիկլի համար: Այդպիսի ցուցանիշներ կարող են լինել ընթացիկ ծախսերը, կանխատեսվող ներդրումները, կորուստները, հավաքագրումները և այլն: Իսկ ընկերությունների համար օպտիմալացում կատարելու խթանը կարգավորման ընտրված ցիկլի ընթացքում (ցանկալի է կարճ ժամանակահատվածում) լրացուցիչ եկամուտներ ստանալու և դրանց միջոցով ներդրումներ իրականացնելու հնարավորություն է: Ավելին, նշված մեթոդի զգալի կիրառումը ունի իր դրական ազդեցությունը համահիմնադիրների համար: Մասնավորապես.

- կարգավորվող բնական մենաշնորհի սուբյեկտի համար ստեղծվում է կանխատեսելի, մատուցվող ծառայության կայուն սակագնով իրավիճակ՝ կարգավորման ֆիքսված ժամանակահատվածի (օրինակ 3-5 տարի) համար: Նշված մոտեցումը ուղղակի խթանում է սուբյեկտին ֆիքսված ժամանակահատվածում իրականացնել ներդրումներ՝ նոր ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման նպատակով, և որ ամենակարևորն է, դրդում է տվյալ սուբյեկտին դրանք կատարել շատ արագ, որպեսզի օգտագործի նախկին ծախսերի կրճատման հետևանքով ազատված ֆինանսական միջոցները: Ավելին, հաջորդ տարիներին, ծառայության սակագինը ամփոփոխ թողնելով, հնարավորություն է ստեղծվում այդ սակագնում «տեղավորել» այն ներդրումների ծավալը, որոնք իրականացվել են նախորդող տարում: Սակագնի վրա բացասական ազդեցություն չթողելու նպատակով, կարգավորողը, մեթոդիկայում ֆիքսում է թե՛ տվյալ տարվա ներդրումների առավելագույն ծավալը, և թե՛ սակագնի վրա ազդեցություն ունեցող, տեխ-

նիկատնտեսական ցուցանիշները, որոնք պետք է բարելավվեն կարգավորման ֆիքսված ժամանակահատվածում: Եթե սուբյեկտը, ինչ որ պատճառով տվյալ ժամանակահատվածում իրականացրել է ավելի մեծ ծավալով ներդրումներ, քան ֆիքսված էր մեթոդիկայում, ապա այդ ավելի մասի ներդրման վերադարձը տեղափոխվում է հաջորդ տարի (տարիներ), իսկ ֆիքսվածից պակասի դեպքում՝ նվազում սակագինը:

- պետության համար ստեղծվում է սակագնային կարգավորման կայուն ժամանակահատված, որի ընթացքում իրականացվում են մեծածախ ներդրումներ (օրինակ՝ մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում, պարզ է դարձել որ միայն բաշխիչ ցանցերում նման մեթոդալոգիայի կիրառման պարագայում տարեկան շուրջ 22-25 մլրդ. դրամ), ինչը իր հերթին ապահովում է դրական էֆեկտ՝ պետական բյուջեյի լրացուցիչ մուտքեր՝ հարկերի տեսքով: Եվ վերջապես, սակագնային կարգավորման ժամանակահատվածի ավարտին ստեղծվում է նոր տեխնոլոգիաներով հագեցած ժամանակակից ենթակառուցվածք:

- կարգավորողի համար ստեղծվում է մի իրավիճակ, որտեղ, համահիմնադիրների համաձայնությամբ, գործում է ֆիքսված սակագին հաշվարկելու մեթոդիկայով սահմանված «խաղի» արդար կանոններ, գրեթե վերանում է ժամանակատար և մեծ մարդկային (նեղ մասնագիտական) ռեսուրսներ պահանջող գործընթացը՝ յուրաքանչյուր սակագին սահմանելիս մանրակրկիտ ուսումնասիրել սակագնի տարր կազմող բազմաթիվ ծախսերը: Այս պարագայում պահպանվում է միայն ֆիքսված ժամանակահատվածի համար բնական մենաշնորհի սուբյեկտի կողմից կատարված ներդրումների արժանահավատության ստուգման խնդիրը, բայց վերջինս լուծվում է յուրաքանչյուր տարի, անցած տարվա ներդրումների աուդիտի անցկացման միջոցով, իսկ աուդիտի ընտրությունը իրականացվում է մրցութային կարգով՝ մրցութային հանձնաժաղովում ներառելով բոլոր համահիմնադիրների ներկայացուցիչներին:

- սպառողների համար ստեղծվում է սակագնային կարգավորման կայուն ժամանակահատված, բարելավվում է նրանց մատուցվող ծառայությունների մակարդակը, հուսալիությունը և անվտանգությունը, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն են ստեղծում գրեթե բացառել շփումը, տվյալ դեպքում բաշխիչ ցանցի ներկայացուցիչների հետ արդյունքում՝ հանրության շրջանում առաջանում է հանդգնույթ, որ մատուցված ծառայության սակագինը հաշվարկվել և սահմանվել է արդարացի:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սողոմոնյան Մ. Է. Գնագոյացման հիմնախնդիրները բնական մենաշրոնի պայմաններում: // «Գիտական հոդվածների հավաքածու» ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն, «Նաիրի» հրատարակչություն, #1 2018թ.- էջ 350-361,
2. Սողոմոնյան Մ. Է. Բնական մենաշնորհի կարգավորման արտասահմանյան կառուցակարգերի կիրառման հնարավորությունների Հայաստանի Հանրապետությունում: // «Արդարադատություն» գիտական հանդես, Իրավական կրթության եվ վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն, «Նաիրի» հրատարակչություն, #1(42) 2018թ.- էջ 47-52,
3. Սողոմոնյան Մ. Է. Բնական մենաշնորհի գործառույթների տեսակները և առանձնահատկությունները: // ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց համալսարանի ԼՐԱ-ՏՈՒ» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, «Լիմուշ» հրատարակչություն, #3 2018թ.- էջ 490-498,
4. Սողոմոնյան Մ. Է. Main methodology of temporary settlement of natural monopolists activities. // Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Տեղեկագիր, «Նաիրի» հրատարակչություն, #2 2018թ.- էջ 95-99,
5. Սողոմոնյան Մ. Է. Ինստիտուցիոնալ վերափոխումները Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհի համակարգում: // «Տարածաշրջան և աշխարհ» Սևծովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտի գիտավերլուծական հանդես, «Անտարես» հրատարակչություն, #X-4 2019թ.- էջ 70-75,
6. Սողոմոնյան Մ. Է. Բնական մենաշնորհների պետական կարգավորման մեթոդների և կառուցակարգերի կատարելագործման ուղղությունները: // ԵՊՀ և ԱԵԳՄՄ «Գիտական Արցախ» պարբերական «ԱԵԳՄՄ» հրատարակչություն, #1 (2) 2019թ. - էջ 170-178,
7. Սողոմոնյան Մ. Է. Պետության կողմից բնական մենաշնորհի կարգավորումը: // Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ազրոգիտություն և տեխնոլոգիա» միջազգային գիտական պարբերական, «Նաիրի» հրատարակչություն, #2/66 2019թ.- էջ 59-64

СОГОМОНЯН МИКАЭЛ ЭРНЕСТОВИЧ

**ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ
ЕСТЕСТВЕННЫХ МОНОПОЛИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата
экономических наук по специальности: 08.00.02 – «Экономика и
управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится 8-го декабря 2020 года в 14⁰⁰ часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна, 74.

РЕЗЮМЕ

На современном этапе развития экономики Республики Армения важную роль играют естественные монополии, которые рассматриваются как существенные факторы стабилизации бюджетообразующей экономики. Проблема усугубляется из-за отсутствия собственных углеводородных (газовых, нефтяных) ресурсов. Следует отметить, что в условиях рыночной экономики, когда объемы производства в Армении значительно снизились, особенно спрос на продукцию промышленности (строительство), продукцию естественных монополий (оказанные услуги), соответственно, и объемы производства значительно снизились. Это поставило новые задачи не только в обеспечении функционирования естественной монополии, но и в усилении и расширении ее регулирующих функций в национальной экономической системе. Проблема исследования осложняется тем, что в последние годы в Армении недостаточно внимания уделяется решению вопросов деятельности субъектов естественных монополий, даже зная о мультипликативной роли этого сектора в развитии национальной экономики, не принимаются надлежащие подходы к его комплексному изучению. Необходимость прояснения данного вопроса и разработка качественных механизмов государственного регулирования определяет важность выбора темы данной работы, структуры диссертации, объема и глубины исследования предложенных проблем. Объектом исследования выступили предприятия, являющиеся субъектами естественной монополии. Предмет исследования: теоретико-методологические вопросы, касающиеся деятельности естественных монополий и государственного регулирования. Методологической

основой исследования послужили законодательные и подзаконные акты, принятые в Республике Армения и других странах, а также отечественные и зарубежные научные работы, связанные с проблемами диссертационного исследования. Используются современные способы и методы регулирования рыночной экономики в мировой экономике, которые касаются формирования конкурентной среды, приватизации экономики, вопросов государственного регулирования естественных монополий. Научная новизна диссертации проявляется в комплексном исследовании деятельности субъектов естественных монополий в Республике Армения, проблем государственного регулирования, как основы развития национальной экономики, методик расчета тарифов и регулирования инвестиционной политики. По результатам диссертационного исследования разработаны следующие научные новинки:

- на основе комплексного анализа взаимодействия государства и субъектов естественных монополий разработаны новые правила и структуры взаимодействия государства и субъектов естественных монополий,
- определены вопросы государственного управления и государственного регулирования естественной монополии и обосновано, что государство также должно иметь статус субъекта регулирования,
- разработана новая структура финансирования и контроля за деятельностью независимого государственного органа, регулирующего естественную монополию,
- Разработан инструментарий стимулирования для регулирования естественных монополий, в частности, новая методология тарифного регулирования, которая внесет значительный вклад в стимулирование инвестиций субъектов естественных монополий и повысит уровень эффективности деятельности.

Полученные в диссертации теоретико-методологические положения, научные результаты, выводы и рекомендации могут быть полезны для совершенствования деятельности естественных монополий РА, структур, направленных на повышение их эффективности, выбор методов государственного регулирования, устранение существующих барьеров, получение четкой информации о деятельности субъекта естественной монополии. Комиссия по регулированию общественных услуг Республики Армения может применять результаты исследования при расчете тарифов на услуги естественных монополий, в некоторых случаях следуя принципам и методам, предложенным нами, а государство (исполнительные и законодательные органы) может проводить институциональные реформы, обеспечивая институциональную независимость Комиссии в пользу реализации своей единственной функции, в частности сбалансирования интересов всех участников рынков естественных монополий.

SOGHOMONYAN MIKAYEL

**PROBLEMS OF STATE REGULATION OF NATURAL MONOPOLIES IN
THE REPUBLIC OF ARMENIA**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty of 08.00.02 – “Economics and Management of Economy and its Spheres”

The defense of the thesis will take place on 8 december 2020, at 14⁰⁰ at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009.

SUMMARY

At the present stage of development of the economy of the Republic of Armenia, natural monopolies play an important role, which are considered as essential factors in stabilizing the budget-forming economy. The problem is aggravated by the lack of its own hydrocarbon (gas, oil) resources. It should be noted that in the conditions of a market economy, when the volume of production in Armenia has significantly decreased, especially the demand for industrial products (construction), products of natural monopolies (services provided), respectively, and production volumes have significantly decreased. This set new tasks not only to ensure the functioning of the natural monopoly, but also to strengthen and expand its regulatory functions in the national economic system. The research problem is complicated by the fact that in recent years in Armenia not enough attention has been paid to solving the issues of natural monopoly activity, even knowing about the multiplicative role of this sector in the development of the national economy, appropriate approaches to its comprehensive study are not taken.

The need to clarify this issue and the development of high-quality state regulation mechanisms determines the importance of choosing the topic of this work, the structure of the thesis, the volume and depth of research on the proposed problems. The objects of the research were enterprises that are subjects of natural monopoly. Subject of research: theoretical and methodological issues related to the activities of natural monopolies and state regulation.

The methodological basis of the research was the legislative and by-laws adopted in the Republic of Armenia and other countries, as well as domestic and foreign scientific works related to the problems of dissertation research. Used modern methods and methods of regulation of the market economy in the world economy, which relate to the formation of a competitive environment, privatization of the economy, issues of state regulation of natural monopolies. The scientific novelty of the dissertation is manifested in a comprehensive study of the activities of subjects of natural monopolies in the Republic of Armenia, the problems of state regulation, as the basis for the development of the national economy, methods for calculating tariffs and regulating investment policy. Based on the results of the dissertation research, the following scientific novelties have been developed:

- on the basis of a comprehensive analysis of the interaction between the state and subjects of natural monopolies, new rules and structures of interaction between the state and subjects of natural monopolies have been developed,
- issues of state administration and state regulation of natural monopoly were determined and it was substantiated that the state should also have the status of a subject of regulation,
- a new structure of financing and control over the activities of an independent state body regulating natural monopoly has been developed,
- an incentive toolkit has been developed for regulating natural monopolies, in particular, a new methodology for tariff regulation, which will make a significant contribution to stimulating investments by natural monopoly entities and will increase the level of efficiency.

The theoretical and methodological provisions, scientific results, conclusions and recommendations obtained in the dissertation can be useful for improving the activities of natural monopolies in the Republic of Armenia, structures aimed at increasing their efficiency, choosing regulatory methods, eliminating existing barriers, obtaining clear information about the activities of a natural monopoly subject. The Public Services Regulatory Commission of the Republic of Armenia can apply the research results when calculating tariffs for the services of natural monopolies, in some cases following the principles and methods proposed by us, and the state (executive and legislative bodies) can carry out institutional reforms, ensuring the institutional independence of the Public Services Regulatory Commission. services of the Republic of Armenia in favor of realizing its sole function, in particular, balancing the interests of all participants in the markets of natural monopolies.